ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО

YEREVAN STATE UNIVERSITY
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia
sss@ysu.am, www.sss.ysu.am, www.ysu.am

№ 108 «05» 11 2013 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (2012-2013 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ)

2012-2013 ուստարում Ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ ՈԻԳԸ) իրականացրել է կանոնադրային պահանջներից բխող միջոցառումներ, նպաստել է ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը: 2012թ. դեկտեմբերի 7-ին ընդունվել է ՈԻԳԸ նոր աշխատակարգը, որով հստակեցվել են կառույցի ներքին աշխատանքային սկզբունքները:

ՈԻԳԸ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ ՈԻԳԸ ղեկավար մարմինը Գիտական խորհուրդն է, որի կազմում են ԵՊՀ ՈԻԳԸ նախագահը, փոխնախագահը, քարտուղարը, աշխատակազմի ղեկավարը, Իջևանի մասնաճյուղի ՈԻԳԸ նախագահը, տեղեկատվական հանձնաժողովի ղեկավարն ու ֆակուլտետային 19 ՈԻԳԸ-ների նախագահները:

ՈԻԳԸ գիտական խորհրդի կազմը.

1. Մալխասյան Միքայել (նախագահ)
2. Շահինյան Գրիգոր (փոխնախագահ)
3. Ղանալանյան Տիգրան (քարտուղար)
4. Հակոբյան Միեր (աշխատակազմի ղեկավար)
5. Ծատրյան Հարություն (տեղեկատվական հանձնաժողովի ղեկավար)
6. Ալավերդյան Սլավիկ (Իջևանի մասնաճյուղ)
7. Իգիթյան Հայկ (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ)
8. Մելքոնյան Սարգիս (Աստվածաբանության ֆակուլտետ)
9. Կոստանյան Վարդան (Արևելագիտության ֆակուլտետ)
10. Սարգսյան Լուսինե (Ժուռնալիստիկայի ֆակուլտետ)
11. Խաչատրյան Հրանտ (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ)

12. Հովսեփյան Մարիամ (Իրավագիտության ֆակուլտետ)
13. Բենկլյան Տաթևիկ (Կենսաբանության ֆակուլտետ)
14. Պողոսյան Թամարա (Հայ բանասիրության ֆակուլտետ)
15. Խուրշուդյան Ասատուր (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ)
16. Հարությունյան Ժաննա (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ)
17. Մխոյան Հայկ (Պատմության ֆակուլտետ)
18. Առաքելյան Շանթ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ)
19. Հովակիմյան Նազենի (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ)
20. Մանուկյան Ռուզաննա (Ռուս բանասիրության ֆակուլտետ)
21. Գրիգորյան Օֆելյա (Սոցիոլոգիայի ֆակուլտետ)
22. Այդինյան Տիգրան (Տնտեսագիտության ֆակուլտետ)
23. Նիկոյան Վարսիկ (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ)
24. Ավետիսյան Հերմինե (Քիմիայի ֆակուլտետ)
25. Միրզախանյան Սարհադ (Ֆիզիկայի ֆակուլտետ)

Հաշվետու ուստարվա ընթացքում 3 անգամ գումարվել է ՈՒԳԸ ընդլայնված նիստ՝ ՈՒԳԸ գրեթե բոլոր անդամների մասնակցությամբ: ՈՒԳԸ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումներում ընդգրկված սովորողների թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, կրճատվել է 3,6%-ով, ինչը պայմանավորված է Իջևանի մասնաճյուղում ՈՒԳԸ անդամի՝ ԵՊՀ ՈՒԳԸ անդամության սկզբունքներին համապատասխանեցման գործընթացի արդյունքում անդամների թվի կրճատմամբ և ՈՒԳԸ արտաքին կապերի հանձնաժողովի աշխատանքների սառեցմամբ: Միևնույն ժամանակ ՈՒԳԸ կանոնադրությամբ ամրագրված ամբիոնային երաշխավորության սկզբունքով ՈՒԳԸ անդամների թիվն աճել է 18,5%-ով: Հարկ է նշել, որ ՈՒԳԸ կազմում գենդերային հարաբերակցությունը համաչափ է:

ՈՒԳԸ ստորաբաժանումները և անդամների թիվը 2013թ. հունիսի 20-ի դրությամբ

Ստորաբաժանումը	***Անդամների թիվը***
Գիտական խորհուրդ	25
Աշխատակազմ	49
Տեղեկատվական հանձնաժողով	16
Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ	21
Ֆակուլտետային ՈՒԳԸ-ներ	276
Ընդամենը	***387***

ՈՒԳԸ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՈՒԳԸ կողմից կազմակերպված միջոցառումների ընդհանուր թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, ավելացել է 49,9%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է սեմինարների (2 անգամ) և դպրոցներում անցկացվող բաց դասերի (5 անգամ) թվի աճով, ինչպես նաև Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ կողմից կազմակերպված միջոցառումների վիճակագրության ներառմամբ:

2012-2013 ուստարում ՈՒԳԸ կողմից կազմակերպված միջոցառումների տեսակային ցանկը.

Միջոցառման բնույթը	*Քանակը*
Միջազգային գիտաժողով	1
Հանրապետական, միջբուհական և համահամալսարանական գիտաժողով	24
Ներֆակուլտետային գիտաժողով	25
Ուսուցողական ծրագիր-դասընթաց	2
Սեմինար-քննարկում, կլոր սեղան, հանդիպում- դասախոսություն, ֆիլմի դիտում	319
Օլիմպիադա	14
Գիտաճանաչողական էքսկուրսիա	44
Դասախոսություն (բաց դաս) դպրոցներում	46
Բանավեճ, դատախաղ, ինտելեկտուալ խաղ և մրցութային այլ միջոցառումներ	49
Այլ (ցուցահանդես, դպրոցականների այց ԵՊՀ և այլն)	17
Ընդամենը	***541***

ա) Միջազգային գիտաժողով

- Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով (14-19.10.2012):

բ) Հանրապետական, միջբուհական և համահամալսարանական գիտաժողով

- «Տնտեսագիտության արդի հիմնախնդիրները» (Տնտեսագիտության ֆակուլտետ, 09-11.11.2012),
- Սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրման 8-ամյակին նվիրված գիտաժողով (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 12.11.2012),
- ՄԱԿ-ի մոդել-կոնֆերանս (ՀՀ-ում ՄԱԿ-ի ներկայացուցչության հետ համատեղ, 17.11.2012),
- «Գրականության արդի հիմնախնդիրները» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 28.11.2012),
- Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ հիմնադրման 10-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով (Իջևանի մասնաճյուղ, 04-07.12.2012),
- «Լեզու, գրականություն և միջմշակութային հաղորդակցություն» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 11.12.2012),
- «ՀՀ օրենսդրության արդի վիճակն ու զարգացման միտումները» (Իրավագիտության ֆակուլտետ, 12-13.12.2012),
- «Արցախի անցյալը, ներկան, հեռանկարները» (Պատմության ֆակուլտետ, 21.02.2013),
- «Տնտեսագիտության զարգացման հիմնահարցեր» (Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ և ԵԳՄ, 21-24.02.2013),
- «Արևելքից Արևելք» հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Արևելագիտության ֆակուլտետի հիմնադրման 45-ամյակին (Արևելագիտության ֆակուլտետ, 12-13.04.2013),
- «Լեզվաբանության հիմնախնդիրներ» (Ռոմանագերմանական բանասիրության և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 17-19.04.2013),

- «Հայ գրականության հիմնահարցեր» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 30.04.2013),
- «Սփյուռքահայության հիմնախնդիրներ» (Պատմության և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 02.05.2013),
- «Զարգացող երկրներին բնորոշ տնտեսական խնդիրները» (Իջևանի մասնաճյուղ, 02.05.2013),
- «Սոցիալական հիմնախնդիրները արդի հայ հասարակությունում» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 10.05.2013),
- «Հայոց լեզվի հիմնահարցեր» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 15.05.2013),
- «Առօրյա և առօրեականություն. ժամանակի փիլիսոփայական անդրադարձը» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 23.05.2013),
- Հայաստանի Առաջին Հանրապետության անկախության հռչակման 95-րդ տարեդարձին նվիրված հոբելյանական գիտաժողով (Պատմության ֆակուլտետ, 30-31.05.2013),
- Արցախյան շարժման սկզբնավորման 25-ամյակին նվիրված հոբելյանական գիտաժողով (ՌԻԳԸ գիտական խորհուրդ և ԱրՊՀ, 05-07.07.2013) և այլն:

գ) Ներֆակուլտետային գիտաժողով

- «Նանոտեխնոլոգիան և նրա հեռանկարները» (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 25.10.2012),
- «Արևելքի կրոններն ու հավատալիքները» (Արևելագիտության ֆակուլտետ, 04.03.2013),
- «Արաբա-իսրայելական հակամարտության պատմությունը» (Արևելագիտության ֆակուլտետ, 14.03.2013),
- «Հայոց լեզվի արդի հիմնախնդիրները» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 09.04.2013),
- «Նշանագիտություն և մշակույթ» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 07-08.05.2013),
- «ՀՀ քրեական օրենսգրքում առկա խնդիրները և զարգացման հեռանկարները» (Իրավագիտության ֆակուլտետ, 08.05.2013),
- «Թուրքիա. պատմական ակնարկ» (Արևելագիտության ֆակուլտետ, 10.05.2013),
- «Կիսահաղորդչային ֆիզիկայի հիմնախնդիրներ» (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 10.05.2013),
- «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը. նախատեսվող փոփոխությունների ազդեցությունը ոլորտի հետագա զարգացման վրա» (Իրավագիտության ֆակուլտետ, 15.05.2013),
- «ՀՀ քաղաքացիական օրենսդրության ներկա վիճակը և զարգացման հեռանկարները» (Իրավագիտության ֆակուլտետ, 17.05.2013) և այլն:

ԵՊՀ ՌԻԳԸ կողմից կազմակերպված գիտաժողովների ընթացքում հնչել է շուրջ 1 000 գիտական զեկուցում, ընդ որում՝ մոտ 50 ուսանողներ զեկուցում են ներկայացրել ոչ իրենց ֆակուլտետում անցկացված գիտաժողովում: Զեկուցումների թիվը, նախորդ ուստարվա համեմատությամբ, ավելացել է շուրջ 43%-ով, ինչը պայմանավորված է Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՌԻԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում ներկայացված 350 զեկուցումների առկայությամբ:

դ) **Ուսուցողական ծրագիր-դասընթաց**

1. «Գիտական աշխատանքներ կատարելու հմտությունների ուսուցում».

- «Գիտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» խորագրով ֆակուլտետային սեմինարներ (սեմինարավար՝ տվյալ ֆակուլտետի մասնագետ, սեպտեմբեր-մայիս, 2012-2013):
- Նախապատրաստվում է հրատարակման գիտական աշխատանքներ (ռեֆերատ, կուրսային և ավարտական աշխատանքներ, մագիստրոսական թեզ, գիտական հոդված և այլն) կատարելու մեթոդական ձեռնարկ-ուղեցույց:

2. «CUDA համակարգով զուգահեռ ծրագրավորման օնլայն դասընթացներ» (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, փետրվար-մայիս, 2013):

ե) **Սեմինար-քննարկում, կլոր սեղան**

- «Գր. Ղափանցյանի գիտական ժառանգությունը» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 24.09.2012),
- «Հայ գրքի ուղին» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 01.10.2012),
- «Կուր-Արաքսյան վաղ բրոնզեդարյան մշակույթը» (Պատմության ֆակուլտետ, 05.10.2012),
- «Սոցիալական աշխատողի դերը և գործառույթները» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 10.10.2012),
- «Ժեստերի լեզուն միջազգային հարաբերություններում» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 10.10.2012),
- «Բանակցության մշակույթի զարգացումը Հայաստանում» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 11.10.2012),
- «Սևանի հիմնախնդիրը» (Կենսաբանության ֆակուլտետ, 21.10.2012),
- «Եղ. Չարենցի կյանքի և ստեղծագործության վերջին շրջանը» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 30.10.2012),
- «Ընդհանրացված ֆունկցիաների տեսությունը և դրա կիրառությունը» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 05.11.2012),
- «Նանոտեխնոլոգիաները գիտության մեջ» (Ֆիզիկայի ֆակուլտետ, 08.11.2012),
- «Սերվիսի արդի հիմնախնդիրները» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 09.11.2012),
- «Տուրի՞զմ, թե՞ արդյունաբերություն» (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 14.11.2012),
- «Առասպելներ. հայկական առասպելների պատմագեղարվեստական արժեքը» (Պատմության, Հայ բանասիրության ֆակուլտետներ, 15.11.2012),
- «Ղարաբաղյան հակամարտության միջազգային իրավական կարգավորման հիմնահարցեր» (Իրավագիտության ֆակուլտետ, 29.11.2012),
- «Ինչպե՞ս են տոնում Սուրբ Ծնունդը Գերմանիայում» (գերմաներեն, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 03.12.2012),
- «Իտալիայի Սիցիլիա կղզին» (իտալերեն, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 07.12.2012),
- «Կյանքը Օքսֆորդում» (անգլերեն, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 17.12.2012),

- «Հայ անվանի գիտնականը՝ ակադեմիկոս Վ. Սարգսյան» սեմինար-քննարկումների շարք (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 15.02.2013, 22.02.2013, 01.03.2013),
- «Գրաֆների տեսությունը» սեմինարների շարք (Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, 16.02.2013, 23.02.2013, 02.03.2013, 09.03.2013, 16.03.2013, 23.03.2013, 06.04.2013, 20.04.2013, 27.04.2013, 04.05.2013, 11.05.2013, 15.06.2013),
- «Իմ սիրելի գիրքը» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 19.02.2013),
- «Հայաստանը Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում» (Արևելագիտության ֆակուլտետ, 20.02.2013),
- «Անվանի գիտնականը՝ պրոֆեսոր Էդ. Գրիգորյան» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 20.02.2013),
- «Լեզու և մտածողություն» (Արևելագիտության ֆակուլտետ, 21.02.2013),
- «Կանտ. ի՞նչ է լուսավորությունը» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 25.02.2013),
- «Թուրքիայի քաղաքականությունը էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ» (Արևելագիտության ֆակուլտետ, 27.02.2013),
- «Թարգմանե՞լ, թե՞ ոչ. փոխառությունների և օտարաբանությունների խնդիրը» (Ռոմանագերմանական բանասիրության և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 27.02.2013),
- «Թալիշական հիմնախնդիրը. ներկան և հեռանկարները» (Արևելագիտության ֆակուլտետ, 28.02.2013),
- «Քաղկեդոնի եկեղեցական ժողովը և առաքելականությունը» (Արևելագիտության ֆակուլտետ և Գևորգյան հոգևոր ճեմարան, 02.03.2013),
- «Հայերեն տեքստը՝ որպես թվային ինֆորմացիա. տեքստի հավելուրդայնությունը» (Ռադիոֆիզիկայի և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 05.03.2013),
- «Հայ եկեղեցու միսիոներությունը» (Աստվածաբանության ֆակուլտետ, 06.03.2013),
- «Կենսունակության ցուցիչը ինքնաթիռների կառուցվածքներում» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 07.03.2013),
- «Անվան ըմբռնումը հին հնդիկների լեզվափիլիսոփայության ու քերականության մեջ, ինչպես և վաղ չինական լեզվաբանական համակարգում» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 11.03.2013),
- «Ներքաղաքական իրավիճակը Սիրիայում. հայկական համայնքը» (Արևելագիտության ֆակուլտետ, 12.03.2013),
- «Հայ մեծ գրողների ստեղծագործությունները ռուսերեն թարգմանությամբ» սեմինարների շարք (Ռուս բանասիրության ֆակուլտետ, 12.03.2013, 15.04.2013, 07.05.2013),
- «Շտուրմ-Լիուվիլլի խնդրի սեփական արժեքների ասիմպտոտիկայի որոշման նոր մեթոդի մասին» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 14.03.2013),
- «Գո՞հ եք կրեդիտային համակարգից, թե՞ ոչ» (Հայ բանասիրության ֆակուլտետ, 19.03.2013),
- «Երկու անվերջություն՝ Հ. Հայնե և Մ. Մեծարենց» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 19.03.2013),

- «Սահքերի հաշվառման անիզոտրոպ սալի օպտիմալ ղեկավարման խնդիրը» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 22.03.2013),
- «Հետաքրքրաշարժ ֆիզիկա» սեմինարների շարք (Ֆիզիկայի ֆակուլտետ, 28.03.2013, 18.04.2013),
- «Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը և Հայաստանը» (Իրավագիտության ֆակուլտետ, 06.04.2013),
- «ՀՀ քաղաքական համակարգը» (Իրավագիտության ֆակուլտետ, 16.04.2013),
- «Հովի. Թումանյան և Վ. Համբարձումյան. ստեղծագործական և գիտական զուգահեռներ» (Ռադիոֆիզիկայի և Հայ բանասիրության ֆակուլտետներ, 16.04.2013),
- «Հաճոյախոսությունը սոցիալ-մշակութային համատեքստում» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 16.04.2013),
- «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի շուրջ» (Իրավագիտության ֆակուլտետ, 17.04.2013),
- «Դետերմինացված քաոս» (Ֆիզիկայի ֆակուլտետ, 17.04.2013),
- «Պատասխանատվությունը միջազգային իրավունքում. միջազգային կազմակերպությունների պատասխանատվությունը» (Իրավագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ և Միջազգային համեմատական իրավունքի կենտրոն, 19.04.2013),
- «Ժամանակակից հայ կնոջ կերպարը. վերլուծություն սոցիալական և իրավական տեսանկյուններից» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 19.04.2013),
- «Ցեղասպանագիտության զարգացման հեռանկարները» (Պատմության և Սոցիոլոգիայի ֆակուլտետներ, 25.04.2013),
- «Հայոց ցեղասպանությունը» (Իջևանի մասնաճյուղ, 25.04.2013),
- «Հղիության արհեստական ընդհատումը» (Իրավագիտության ֆակուլտետ, 25.04.2013),
- «Օտարերկրացիների իրավական վիճակը ՀՀ-ում» (Իրավագիտության ֆակուլտետ, 03.05.2013),
- «Հարդի տարածություններում բազիսի կառուցման մասին» (Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետ, 03.05.2013) և այլն:

զ) Հանդիպում-դասախոսություն

- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում «Շանթ» հեռուստաընկերության լրագրող Քրիստինե Ալագուլյանի հետ, ով ներկայացրել է արտասահմանյան գործուղումների լուսաբանման առանձնահատկությունները (12.10.2012):
- Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր Հայրապետ Մարգարյանի հետ, ով ներկայացրել է պատմաբանի առաքելությունը մերօրյա իրականությունում: Հանդիպում-դասախոսության օրը, որը 18-րդ դարի հայ մեծանուն պատմիչ-պատմաբան Միքայել Չամչյանցի ծննդյան օրն էր, ԵՊՀ պատմության ֆակուլտետում առաջին անգամ նշվել է որպես պատմաբանի օր (04.12.2012):
- ՈՒԳԸ Գիտական խորհուրդը կազմակերպել է հանդիպում ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն Մհեր Հովհաննիսյանի հետ:

Հանդիպման ընթացքում հստակեցվել են ՈՒԳԸ հայագիտական խմբակի գործունեության ուղղությունները (12.12.2012):

- Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում «Մոդուս-Վիվենդի» կենտրոնի տնօրեն Արա Պապյանի հետ, ով ներկայացրել է Հայկական հարցի լուծման հնարավորությունները Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի շնորհիվ (08.04.2013):
- Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կազմակերպել է հանդիպում ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի հետ, ով ներկայացրել է տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրը ՀՀ-ում (15.04.2013):
- ՈՒԳԸ գիտական խորհուրդը Հայոց ցեղասպանության 98-րդ տարելիցի կապակցությամբ կազմակերպել է հանդիպում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանի և ԵՊՀ պատմության թանգարանի տնօրեն, պ.գ.թ., դոցենտ Ժակ Մանուկյանի հետ, ովքեր ներկայացրել են Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման արդի հնարավորություններն ու հեռանկարները, այդ գործընթացներում երիտասարդության հնարավոր ներգրավումը (23.04.2013):
- Իրավագիտության և Արևելագիտության ֆակուլտետների ՈՒԳԸ-ները կազմակերպել են հանդիպում Արևելագիտության ֆակուլտետի փոխդեկան, բ.գ.թ., դոցենտ Ռուբեն Մելքոնյանի հետ, ով ներկայացրել է թուրքական հասարակության շրջանում Հայոց ցեղասպանության փաստի ընկալումների առանձնահատկությունները (26.04.2013) և այլն:

է) Գիտահանրամատչելի և գեղարվեստական ֆիլմերի դիտումներ

- «Մեծ պայթյունից առաջ» (Ֆիզիկայի ֆակուլտետ, 03.10.2012),
- «Չեռնոբիլի ռադիոակտիվ գայլերը» (Ֆիզիկայի ֆակուլտետ, 12.11.2012),
- «Կիլիկիա» (Պատմության ֆակուլտետ, 23.11.2012),
- «ՀԱՊԿ. միասին մենք ուժ ենք» (Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ՈՒԳԸ և ՀԱՊԿ ինստիտուտի Հայաստանի ազգային ներկայացուցչություն, 12.03.2013),
- «Լինել քաղաքացի» (Սոցիոլոգիայի ֆակուլտետ, 29.03.2013),
- «Արարատից Սիոն» (Աստվածաբանության ֆակուլտետ, 05.04.2013),
- «Յուրի Գագարին. աստեղային ընտրյալը» (Իջևանի մասնաճյուղ, 08.04.2013),
- «Տիկինը շնիկով» (Ռուս բանասիրության ֆակուլտետ, 10.04.2013),
- «Կամուրջ» (Իջևանի մասնաճյուղ, 10.04.2013),
- «Հաչող կղզի» (Արևելագիտության ֆակուլտետի ՈՒԳԸ և ՈՒԽ, 22.04.2013),
- «Վանա ծովուն արշալույսը» (Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետ, 23.04.2013),
- «Մայրիկ» (Իջևանի մասնաճյուղ, 23.04.2013),
- «Ծովը ներսում» (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 25.04.2013),
- «Ջուր» (Իջևանի մասնաճյուղ, 02.05.2013) և այլն:

ը) Օլիմպիադա

- Ֆիզիկայի օլիմպիադա (Ֆիզիկայի ֆակուլտետ, 06.10.2012),

- Պատմության հանրապետական օլիմպիադա հանրակրթական դպրոցների 9-10-րդ դասարանների աշակերտների համար՝ նվիրված ԵՊՀ պատմության ֆակուլտետում պատմաբանի օրվան (160 մասնակից, Պատմության ֆակուլտետ, 15.12.2012),
- Մաթեմատիկայի միջֆակուլտետային օլիմպիադա (Մաթեմատիկայի և մեխանիկայի, Ֆիզիկայի, Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներ, 27.04.2013),
- Մաթեմատիկայի օլիմպիադա (Իջևանի մասնաճյուղ, 15.05.2013) և այլն:

թ) Գիտաճանաչողական էքսկուրսիա

- Բնության թանգարան (Կենսաբանության ֆակուլտետ, 04.10.2012),
- ՀՀ ԳԱԱ հիդրոլոգիայի ինստիտուտ (Կենսաբանության ֆակուլտետ, 08.10.2012),
- Երկրաբանության թանգարան (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 23.10.2012),
- Ս. Փարաջանովի տուն-թանգարան (Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, 02.11.2012),
- ՀՀ ԳԱԱ մոլեկուլային կենսաբանության և գենետիկայի ինստիտուտ (Կենսաբանության ֆակուլտետ, 09.11.2012),
- «Գաֆէսճեան» արվեստի թանգարան (Հայ բանասիրության ֆակուլտետ, 12.11.2012),
- Աշտարակի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 15.11.2012),
- Պռոշյանի գինու և կոնյակի գործարան (Քիմիայի ֆակուլտետ, 23.11.2012),
- Մատենադարան (Հայ բանասիրության ֆակուլտետ, 20.02.2013),
- Եղ. Չարենցի անվան տուն-թանգարան (Հայ բանասիրության ֆակուլտետ, 22.02.2013),
- Ս. Էջմիածին, Գևորգյան հոգևոր ճեմարան (Արևելագիտության ֆակուլտետ, 02.03.2013),
- Դ. Դեմիրճյանի տուն-թանգարան (Հայ բանասիրության ֆակուլտետ, 13.03.2013),
- Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտ (Ռադիոֆիզիկայի ֆակուլտետ, 14.03.2013),
- Աշտարակի ֆիզիկայի ինստիտուտ (Ֆիզիկայի ֆակուլտետ, 21.03.2013),
- Իջևանի պատմության թանգարան (Իջևանի մասնաճյուղ, 18.04.2013),
- ՀՀ պետական ռեգիստրի գրասենյակ (Տնտեսագիտության ֆակուլտետ, 30.04.2013),
- Հայաստանի նկարիչների միություն (Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 30.04.2013),
- Ս. Էջմիածին (Իրավագիտության ֆակուլտետ, 08.05.2013) և այլն:

ժ) Դասախոսություն (բաց դաս) դպրոցներում

Հանրակրթական դպրոցների հետ իրականացվող բոլոր ծրագրերը, այդ թվում՝ բաց դասերն ու օլիմպիադաները, կազմակերպվել են Մինչհամալսարանական կրթության վարչության հետ համատեղ: Սովորաբար բաց դասերը կրել են թեմատիկ (գիտական) բնույթ: Առանձնակի ուսուցողական նշանակություն ունեին հատկապես Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ կողմից 2012թ. նոյեմբերի 16-ին և 19-20-ը ՀՀ 6 դպրոցներում կազմակերպված և ՀՀ հարևան պետություններին վերաբերող ճանաչողական բաց դասերը, ինչպես նաև ՀՀ 18 դպրոցներում 2013թ. մայիսին կազմակերպված և մայիսյան հերոսամարտերի պատմական նշանակությանը վերաբերող բաց դասերը:

Բաց դասերի մի մասն էլ եղել է մասնագիտական ուղղորդման նպատակով, երբ համապատասխան ֆակուլտետի ղեկավար անձը ներկայացրել է իր ֆակուլտետը: Մասնավորապես հրաշալի է անցել 5 ֆակուլտետների դեկանների հանդիպումը «Քվանտ» վարժարանի հոսքային դասարանների աշակերտների հետ: Նոյեմբերի 17-ին բաց դաս է անցկացրել Պատմության ֆակուլտետի դեկան, պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, նոյեմբերի 24-ին՝ Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Արթուր Սահակյանը և Քիմիայի ֆակուլտետի դեկան, ք.գ.դ., պրոֆեսոր Տարիել Ղոչիկյանը, իսկ դեկտեմբերի 8-ին՝ Իրավագիտության ֆակուլտետի դեկան, ի.գ.դ., պրոֆեսոր Գագիկ Ղազինյանը և Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր Հայկ Սարգսյանը:

Դպրոցներում բաց դասերի անցկացմանը նպաստում է այն հանգամանքը, որ ՈՒԳԸ ակտիվում որոշակի թիվ են կազմում այն սովորողները, ովքեր համատեղում են ուսումնառությունը բուհում և աշխատանքը դպրոցում:

Բացի դպրոցներում անցկացրած բաց դասերից՝ ՈՒԳԸ մի քանի ներկայացուցիչներ (Միքայել Մալխասյան, Տիգրան Ղանալանյան, Հայկ Մխոյան, Սուրեն Պապիկյան, Գոռ Երանյան) դասախոսություններ են կարդացել նաև զորամասերում:

ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Մրցանակներ: 2012-2013 ուստարվա ընթացքում ՈՒԳԸ անդամներից շատերն արժանացել են տարաբնույթ մրցանակների:

2013թ. փետրվարի 20-ին ԵՊՀ Պալեանների անվան դահլիճում ամփոփվել են ՀՀ ԿԳՆ կողմից կազմակերպվող «ՀՀ լավագույն ուսանող» մրցանակաբաշխության արդյունքները, և ԵՊՀ 7 ուսանողներ արժանացել են մրցանակների: Նշված ուսանողներից 5-ը ներկայացնում էին ՈՒԳԸ-ն, մասնավորապես՝ ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը զբաղեցրել է 1-ին տեղը «Գիտահետազոտական աշխատանք (հումանիտար գիտություններ, մագիստրոսի կրթական ծրագիր)», Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ նախագահ Սլավիկ Ալավերդյանը՝ 1-ին տեղը «Գիտահետազոտական աշխատանք (բնական գիտություններ, բակալավր)», Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Հայկ Մխոյանը՝ 1-ին տեղը «Ուսանողական ինքնակառավարում (մագիստրոս)», Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Ասատուր Խուրշուդյանը՝ 1-ին տեղը «Գիտահետազոտական աշխատանք (տեխնիկական գիտություններ, մագիստրոսի կրթական ծրագիր)», Տեղեկատվական հանձնաժողովի ղեկավար Հարություն Ծատրյանը՝ 2-րդ տեղը «Ուսանողական ինքնակառավարում (բակալավր)» անվանակարգերում: Հարկ է նշել, որ «Սինոփսիս-Արմենիա» վարկածով էլ ուստարվա սկզբին «ՀՀ լավագույն ուսանող» մրցանակին էր արժանացել ԻԿՄ ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Հրանտ Խաչատրյանը:

2013թ. մարտի 5-ին ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի կողմից շնորհվել են «Հայապահպանության գործում նշանակալի ներդրում ունենալու համար» ամենամյա մրցանակաբաշխության և Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ գիտական աշխատանքների և շարադրությունների միջազգային մրցույթի հաղթողների մրցանակները: Մրցանակաբաշխության շրջանակում ՀՀ-ից մրցանակի են արժանացել միայն ԵՊՀ-ից ներկայացված հայտերը, մասնավորապես՝ ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների 2012թ. ժողովածուի 2-րդ (ցեղասպանագիտական) հատորը (1-ին կարգ), Նելլի Վարդանյանի

ուսումնասիրությունը (1-ին կարգ), Միքայել Մալխասյանի (2-րդ կարգ) և Նորա Երզնկյանի (2-րդ կարգ) հոդվածները: Մարտի 7-ին ԵՊՀ-ում կայացել է լրացուցիչ մրցանակաբաշխություն, որի ժամանակ ՈՒԳԸ ժողովածուի համար ստացված դրամական պարգևը համամասնորեն բաժանվել է հոդվածների հեղինակներին: Պատվոգրի է արժանացել հատորի գլխավոր խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը:

2013թ. ապրիլի 16-17-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում տեղի է ունեցել Եվրոպական միության և «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի կողմից իրականացվող ուսուցիչների վերապատրաստման և Հարավկովկասյան պատանեկան խորհրդարանի ձևավորմանն ուղղված «Ժողովրդավարությունը սկսվում է քեզանից» 4-ամյա ծրագրի փակումը: ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը, ի թիվս ՀՀ շուրջ մեկ տասնյակ վաստակաշատ ուսուցիչների, Վրաստանում ԵՄ դեսպանի ձեռքից ստացել է ծրագրի ամբողջացման վկայագիր և «Քաղաքացիական կրթության լավագույն ուսուցիչ» մրցանակ:

Մասնակցություն միջազգային գիտաժողովներին ու համաժողովներին:

Ուստարվա ընթացքում ՈՒԳԸ մեծ թվով անդամներ ՀՀ-ում և արտերկրում մասնակցել են հանրապետական և միջազգային գիտաժողովների ու համաժողովների:

Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ մի քանի անդամներ մասնակցել են Ուկրաինայի Լվով քաղաքում սեպտեմբերի 17-24-ն անցկացված միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր մաթեմատիկայի ժամանակակից մի քանի ուղղությունների հիմնադիր Ստ. Բանախի 120-ամյակին: Նրանք նաև մասնակցել են Իտալիայի Ուդինե քաղաքում սեպտեմբերի 26-28-ն անցկացված միջազգային գիտաժողովին, որը նվիրված էր փոփոխական զանգվածով դինամիկական համակարգերի շարժման ուսումնասիրությանը: Ֆակուլտետի ՈՒԳԸ անդամներն անմասն չեն մնացել Ծաղկաձորում հոկտեմբերի 7-12-ն անցկացված «Հոծ միջավայրի մեխանիկայի արդի հիմնախնդիրներրը միջազգային գիտաժողովից, որը նվիրված էր ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ն. Հարությունյանի 100-ամյակին: Մաթեմատիկոսները մասնակցել են նաև Մինսկում (Բելառուս), Դոնեցկում (Ուկրաինա) և Վորոնեժում (ՌԴ) տեղի ունեցած և մաթեմատիկայի և մեխանիկայի արդի հիմնախնդիրներին նվիրված գիտաժողովներին:

2012թ. սեպտեմբերի 20-23-ը ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը, փոխնախագահ Գրիգոր Շահինյանը, ՈՒԳԸ անդամներ Նորա Երզնկյանը և Աննա Արազյանը զեկուցումներով հանդես են եկել «Վարդանանք» ՌՀԴ ակումբի կողմից կազմակերպված «Կրթությունը ՀՀ անվտանգության համատեքստում» գիտապրակտիկ կոնֆերանսում:

2012թ. հոկտեմբերի 4-7-ը ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը մասնակցել է Ուկրաինայի Լվով քաղաքում Եվրոպական միության պատմություն դասավանդողների ասոցիացիայի կողմից կազմակերպված Սնծովյան տարածաշրջանային համաժողովին:

2012թ. հոկտեմբերի 12-ին Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ Նժդեհ Երանյանը զեկուցմամբ հանդես է եկել ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի 33-րդ երիտասարդական գիտաժողովում:

2012թ. հոկտեմբերի 25-28-ն Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ Գոռ Ալեքսանյանը զեկուցմամբ հանդես է եկել Բելառուսի պետական համալսարանում պրոֆեսոր Ն. Ռոմանովսկու ծննդյան 100-ամյակի առնչությամբ տեղի ունեցած «Աշխարհագրական գիտությունները գլոբալիզացիայի պայմաններում կայուն զարգացման ռազմավարության ապահովման գործում» գիտապրակտիկ կոնֆերանսում:

2012թ. դեկտեմբերի 8-ին ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը, ՈՒԳԸ քարտուղար Տիգրան Ղանալանյանը, Պատմության ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Հայկ Մխոյանը, ինչպես նաև Սուրեն Պապիկյանն ու Լիանա Դալլաքյանը Երևանում մասնակցել են Եվրոպական

միության պատմություն դասավանդողների ասոցիացիայի կողմից կազմակերպված «Պատմության շարունակականություն, մշակութային երկխոսություն» համաժողովին:

2013թ. հունվարի 21-ին Հայ բանասիրության ֆակուլտետի ՈՒԳԸ անդամ Նորա Երզնկյանը զեկուցմամբ հանդես է եկել ՀՀ-ում Լեհաստանի դեսպանության և ՀՀ արտաքին գործերի նախարարության կազմակերպած Լեհաստանի և Հայաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյակին նվիրված գիտաժողովում:

2013թ. ապրիլի 8-12-ը ՈՒԳԸ նախագահ Միքայել Մալխասյանը, Հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության մեթոդական բաժնի վարիչ Մամիկոն Թոսունյանը, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ասպիրանտ Նարեկ Մելքոնյանը, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ասպիրանտ Գոռ Ալեքսանյանը, Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի ասպիրանտ Անի Կոջոյանը, նույն ֆակուլտետի մագիստրանտ Սիրանուշ Սեյրանյանը և Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի մագիստրանտ Լեյլի Ալեքսանյանը մասնակցել են Մոսկվայի պետական համալսարանի կողմից կազմակերպված «Լոմոնոսով-2013» միջազգային երիտասարդական գիտական համաժողովին: Զեկուցումների թեզիսները տեղ են գտել լույս տեսած էլեկտրոնային ժողովածուում: Մ. Մալխասյանը, Մ. Թոսունյանը և Ն. Մելքոնյանը մասնակցել են նաև երիտասարդական կազմակերպությունների և ուսանողական կառույցների ղեկավարների համար կազմակերպված «Ժամանակակից կրթական ծրագրերի զարգացումն ԱՊՀ և ԵՄ երկրներում» կլոր սեղանի աշխատանքներին: Ամրապնդվել է համագործակցությունը Մոսկվայի պետական համալսարանի ուսանողական միության հետ:

2013թ. հուլիսի 1-5-ը Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ Ասատուր Խուրշուդյանը մասնակցել է Մադրիդում անցկացված «Երկրաչափության ու մեխանիկայի» միջազգային 7-րդ ամառային դպրոցին:

ԵՊՀ ՈՒԳԸ գործուն աջակցությամբ ապահովվել է ԵՊՀ ուսանողների մասնակցությունը Գյումրիի և Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտների, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի, Գևորգյան հոգևոր ճեմարանի, Սևանի Վազգենյան դպրանոցի, Ա. Խանփերյանցի անվան ռազմավիացիոն ինստիտուտի, Սարդարապատի թանգարան-ինստիտուտի կողմից կազմակերպված գիտաժողովներին և տարաբնույթ միջոցառումներին: Միևնույն ժամանակ ապահովվել է վերը նշված բուհերի ուսանողների մասնակցությունը ԵՊՀ ՈՒԳԸ կողմից կազմակերպված գիտաժողովներին:

Հրատարակություններ

Դասա-գիրք	Մենա-գրու-թյուն	Ուսումնա-կան ձեռնարկ	Ուսումնամե-թոդական ձեռնարկ	Հոդված-ների ժողո-վածու	Հոդված	Զեկուցումների թեզիսների ժողովածու	Զեկու-ցում-ների թեզիս
-	-	-	-	9	372	2	80

Հրատարակումների թիվը, նախորդ ուստարվա համեմատ, ավելի քան 3 անգամ ավելի է, ինչը պայմանավորված է Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի լավագույն 244 աշխատանքների հրատարակմամբ:

Հոդվածների ժողովածու

1. «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», մաս Գ (հասարակական գիտություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 210 էջ (34 հոդված):
2. «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», մաս Դ (հասարակական գիտություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 126 էջ (18 հոդված):
3. «ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու», մաս Ե (բնական գիտություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 120 էջ (22 հոդված):
4. «Ապրանքների միջազգային առուվաճառքի պայմանագրերի մասին ՄԱԿ-ի կոնվենցիային նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու», խմբ.՝ Ա. Մ. Հայկյանց, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 280 էջ (Իրավագիտության ֆակուլտետ, 25 հոդված):
5. «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 1 (բնական գիտություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 186 էջ (28 հոդված):
6. «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 2 (հասարակական գիտություններ. բանասիրություն, մանկավարժություն), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 308 էջ (53 հոդված):
7. «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 3 (հասարակական գիտություններ. իրավագիտություն, ժուռնալիստիկա), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 352 էջ (46 հոդված):
8. «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 4 (հասարակական գիտություններ. պատմություն, փիլիսոփայություն, հոգեբանություն, արևելագիտություն, միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, աստվածաբանություն), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 392 էջ (62 հոդված):
9. «Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈՒԳԸ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու», հ. 5 (հասարակական գիտություններ. տնտեսագիտություն, սոցիոլոգիա), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 344 էջ (55 հոդված):

Հոդված (ՈՒԳԸ-ի ժողովածուներից դուրս ՈՒԳԸ անդամների կողմից հրատարակված)

Բնական գիտություններ

1. *Աթոյան Ա.,* Զանգվածային մահացություններ, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 69-72:
2. *Այվազյան Ա.,* Ռադիոակտիվությունը կենսոլորտում և նրա ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 72-76:
3. *Բալասանյան Ս.,* 03.06.1949թ. Բյուրականի երկրաշարժի նկարագիրը, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 84-89:

4. *Բենկլյան Տ., Աբելյան Տ.*, Բետիդինի ազդեցությունը պրոկարիոտների բջիջներում ընթացող գենետիկական պրոցեսների վրա, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 48-52:
5. *Ղուկասյան Ա.,* Տուրիզմի կայուն զարգացումը Հայաստանի Հանրապետությունում, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 98-103:
6. *Մարգարյան Ա.,* INAS (100) տակդիրի վրա աճեցված INASSBP քվանտային կետերի օպտիկական հատկությունների ուսումնասիրությունը, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 34-37:
7. *Алексанян Г.,* Географическая наследственность как основа устойчивого развития территории, “Сборник Международной научно-практической конференции к 100-летию со дня рождения профессора Н. Т. Романовского”, Минск, 2012, с. 262-264.

Հասարակական գիտություններ

1. *Արզումանյան Ա.*, Հակոբ Մնձուրու գրականագիտական հայացքները, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 157-161:
2. *Աքելյան Գ.,* Վոլտերը՝ կլասիցիստ, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 161-166:
3. *Գալստյան Հ.,* Կինը Սոնա Վանի պոեզիայում, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 166-170:
4. *Գրիգորյան Խ.,* 1988թ. Բաքվից տեղահանված հայերը Սիսիանում (ազգագրական դիտարկումներ), «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 327-330:
5. *Երզնկյան Ն.,* Կրոնապատմական ենթատեքստերը Անանիա Շիրակացու աշխատություններում, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 331-337:
6. *Էլբակյան Է.,* Վասն ինքնորոշման Ջավախաց, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 336-342:
7. *Կարապետյան Հ.*, Մուրացանի անհատականության որոշ դրսևորումներ իր ստեղծագործություններում, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 181-184:
8. *Ղանալանյան Տ.,* Բեյրութի Հայկազյան համալսարանը, «Գլոբուս», թ. 2, Երևան, 2013, էջ 42-51:
9. *Մալխասյան Մ.,* Վանի նահանգի բնակչությունը Հայոց ցեղասպանության նախօրյակին, «Քրիստոնյա Հայաստան», թ. 4-5, Ս. Էջմիածին, 2012:
10. *Մկրտչյան Մ.,* «Սիոնիզմի» դերը համաշխարհային պատմության մեջ, «Համաշխարհային պատմության հիմնահարցեր. ընկերային կառույց, գաղափարախոսություն, քաղաքական համակարգ», Երիտասարդ պատմաբանների միջբուհական 2-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2013, էջ 55-60:
11. *Պողոսյան Ա.,* Թյուրքերի ծագումը. լեգենդ և իրականություն, «Համաշխարհային պատմության հիմնահարցեր. ընկերային կառույց, գաղափարախոսություն, քաղաքական համակարգ», Երևան, 2013, էջ 92-95:
12. *Սեյրանյան Ս.*, Ջորջ Գորդոն լորդ Բայրոնը՝ իբրև արևմտաեվրոպական հայագիտության առաջամարտիկ, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 262-266:

13. *Агабабян С.,* Описание и характеристики рисков национальной идентичности современной Армянской молодежи, “Вестник Балтийской Педагогической Академии”, N 109, Санкт-Петербург, 2012, с. 103-107.
14. *Барсегян А.,* Формирование “земледельческого образа мышления” в раннеземледельческой культуре Армении, “Теория и практика современной науки”, материалы VIII международной конференции, т. II, Москва, 2012, с. 100-105.
15. *Григорян О.,* Особенности формирования национальной идентичности в школах Армении, “Вестник Балтийской Педагогической Академии”, N 110, Санкт-Петербург, 2013, с. 152-153.
16. *Карапетян Э., Джамалян А.,* Влияние родительского контроля на успеваемость ребенка, “Вестник Балтийской Педагогической Академии”, N 110, Санкт-Петербург, 2013, с. 149.
17. *Меликджанян С.,* Особенности представления себя другим в виртуальной реальности, “Вестник Балтийской Педагогической Академии”, N 110, Санкт-Петербург, 2013, с. 146-147.
18. *Мкртчян Г.,* Взаимовлияние языков и культур при переводе художественного текста, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 224-229:
19. *Халатян М.,* Научная миграция студентов как предпосылка утечки мозгов, “Вестник Балтийской Педагогической Академии”, N 110, Санкт-Петербург, 2013, с. 162.
20. *Barseghyan A.,* The struggle among the temporal & the ecclesiastical powers in armenian transitional society, “European Science and Technology: 4th International scientific conference”, Munich, 2013, p. 108-110.
21. *Grigoryan G.,* Cultural Pragmatic failures and the ways of their preventions, «Լեզուն և գրականությունը գիտական իմացության հարացույցում», Երևան, 2012, էջ 174-180:
22. *Hovhannisyan M.,* The art of poetry and its translation, «ԳՊՄԻ ուսանողական գիտական նստաշրջանի նյութեր», Գյումրի, 2013, էջ 256-262:

Զեկուցումների թեզիսների ժողովածու

1. Գրեգոր Մենդելի 190-ամյակին նվիրված գիտաժողով. կենսաբանության զարգացման ժամանակակից միտումները, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, 40 էջ (14 թեզիս):
2. Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր. միջազգային գիտաժողովի նյութեր (ԵԳՄ-ի հետ համատեղ), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, 210 էջ (59 թեզիս):

ՈՒԳԸ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂ ԳՏԱԾ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԸ (ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

- ՈՒԳԸ աշխատանքներին մասնակցում է առավելագույնը շուրջ 1000 սովորող, ինչն առայժմ փոքր թիվ է շուրջ 18,5 հազար սովորող ունեցող բուհի համար:
- ՈՒԳԸ աշխատանքներին անմիջականորեն աջակցած (գիտական հոդվածների գրախոսում, գիտաժողովների նիստերի նախագահում, սեմինարավարություն, լրացուցիչ դասախոսությունների անցկացում և այլն) դասախոսների թիվն ուստարվա ընթացքում հասել է 300-ի, ինչը դեռևս փոքր թիվ է: ՈՒԳԸ կառուցվածքային ստորաբաժանումները պետք է գիտակցված քայլեր կատարեն՝ պրոֆեսորադասախոսական կազմի ավելի մեծ թվով ներկայացուցիչների ՈՒԳԸ աշխատանքներում ներգրավելու համար:
- ՈՒԳԸ-ն չի կարողանում միջազգային գիտական ծրագրերում բավարար մակարդակով ներգրավել ԵՊՀ ուսանողներին և ասպիրանտներին:

- Զինապարտությունից տարկետմամբ մագիստրոսական և ասպիրանտական տեղերի սղությամբ պայմանավորված՝ պոտենցիալ գիտական կադրերի վերարտադրությունը որոշակի արգելակում է ստանում:
- Ուսանողական գիտակրթական միջոցառումների կազմակերպումը հաճախ բախվում է վարչարարական ավելորդ բարդությունների, որոնք երբեմն նախաձեռնության փուլում սառեցնում են միջոցառման կազմակերպման գործընթացը:
- ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածուների հատորյակները խմբագրական և տպագրական բարդությունների պատճառով էջադրված վիճակում ամիսներ շարունակ մնում են հրատարակման գործընթացում:

Հարգանքով՝

ԵՊՀ ՈՒԳԸ նախագահ՝ **Մ. Մալխասյան**